

և թէ այլ ստացվող լրագրները կանոնաւոր հաս-
նում են ստորագրողներին. Ա. Բոստոն օր մի և նոյն
չենք կարող ասել Շամախու, Աղստախ, Ախալ-
քալաքի և Գանձակի փոստային վարչութիւնների
մասին. Գանձակի փոստատան մասին մեզ դուր
են, որ տունը այնքան անյարմար է, նամակները
և լրագրները անկարգ դրութեան մէջ այնպիսի
տեղ են անվաճ, որ ամեն մի անցնող կարող է
նրանցից վերցնել:

ԹԻՖԼԻՍԻ առողջական մասնաժողովի գոր-
ծունէութեան արդիւնները մինչև այժմ չեն
երևում. էլ չենք խօսում մեր քաղաքի ամենա-
յետնկամ փողոցների վրա, բայց Թիֆլիսի ա-
մենալաւ փողոցների մի քանի կէտերի վրա ան-
ցնել չէ կարելի: Սարապիկի գարշահոտութիւն
է բուրում Շտարի և Հառապտիկի գաւիթ-
ներից: Նոյնպէս Գվարջիայի փողոցի վրա գտն-
վող Նարաջովի տան գաւիթից դուրս է գալիս
և թափվում է փողոցը մի սեպտեմբեր ամսուկ, որ
ամբողջ փողոցում տարածում է լէշի հոտը:

Մարտի 16 ի գիշերը անձրեւից յետոյ բարձրա-
ցած ԹԻՖԼԻՍԻՄ այնպիսի սարսափելի քամի
որի նման ոչ ոք չէ յիշում Թիֆլիսում. Այդ քա-
մին զԼեւոյ աների կտուրներից երկաթներ և առ-
հասարակ բաւական վնասներ տուեց: Մերիկը
չարունակում էր և հետեւել օրը, մարտի 17-ին:
Մի կողմից այդ տեսակ քամին մեծ օգուտ կը
տայ քաղաքին, որովհետև աւելի լաւ կը մաքրի
օդը, քան թէ այդ կարող է անել մեր առող-
ջական մասնաժողովը:

Այն մերիկը, որ երկու օր շարունակ տիրա-
պետել է ԹԻՖԼԻՍԻՄ, նոյն կատաղութեամբ
յայտնվել է և Արմաշի տարիքի վրա: Հեռա-
դրական թիւը գրեթէ ամբողջապէս վնասված էր,
այնպէս որ հեռագրական յարաբերութիւնը Ռու-
սաստանի հետ երեք օր շարունակ կտրված էր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍ

Թէ պատերազմի և թէ խաղաղութեան
կողմնակիցները հրապարակական ժողովներ են
անում: Մարտի 3-ին (փետրվ. 19) խաղա-
ղութեան կուսակիցները գումարվել են Հայդ-
Արիկի հասարակաց պարտեզը ուր, թէպէտ
եղանակը վատ է եղել, 40—50 հազարի
չափ ժողովուրդ հաւաքվել են արդէն որո-
շեալ ժամանակից մի ժամ առաջ: Կառավա-
րութիւնը բազմաթիւ ոստիկաններ է ուղար-
կել այնտեղ որ երբ անկարգութիւն պատահի,
շուտով հանդարտեցնեն:

Խաղաղութեան կուսակիցները իրանց պա-
րագրելու ունեւորդ պ. պ. Ավերբոն Հերբերտին
և Բրադլանդին, որովմե ժամանակին եկել են
Հայդ-Արիկ: Իրանց հազուատի կուրծքի օղակ-
ները դրած են եղել կանաչ կամ եռագոյն
ժապաւենից շինված վարդեր: Հէնց որ առա-
ջին հրապարակախօսները բռնը կանգնել են
որ խօսեն, հակառակորդները սկսել են սաս-
տիկ բղաւել, կուռել և խաղաղութեան կու-
սակիցներին վնասել: Այդ խառնակութեան
մէջ պ. Բրադլանդը շարունակել է իր առա-
ջարկութիւնը խաղաղութեան համար և ժո-
ղովրդից ընդունվել է հասնութիւն աղա-
ղակներով: Հակառակորդներից շատերը իրանց
հետ ունեցել են թիւրբաց և այլ դրօշակներ,
նաև սատակած կառուներ և մկներ որոնք
կուռ ժամանակ նետել են խաղաղութեան
բարեկամների գլխին: Տէք դուքոր որ բազ-
մութեան մէջ է գտնվել վերաբերվել է: Հե-
ռուից մի գաւազան նետել են նրա գլխին,
բայց բարեբաղդապէս գլուխը չէ ջարդվել և
միայն զննարկը թռել է գլխից: Պօլեցիա-
կանները շուտով հասել և ազատել են նո-
րին վտանգութեան առանց մեծ վնասի:

Խաղաղարարները Հայդ-Արիկից դուրս գալով
գնացել են օսմանեան դեսպանի պալատի
առջև, բարձր ձայնով բղաւել են «Կեցցէ՛

Մուսուրուս փաշա» և այդպէս մի քանի րօպէ
օդը թնդացնելուց յետոյ՝ խնդրել են ներ-
կայանալ օսմանեան դեսպանին որ բացա-
կայ է եղել կամ թէ այնտեղ է եղել բայց
չէ ուղեցել երևալ: Այնտեղից գնացել են պ.
Պալատոնի բնակված փողոցը: Ճիշդ այն բո-
պէին որ այդ պառնող բազմութիւնը երևա-
ցել է փողոցում, Անգլիայի նախկին զինաւոր
միւստրն էլ պ. Պալատոն, իր տանից դուրս
գալիս է եղել: Բազմութիւնը շրջապատել է
նրան և այդ վտանգաւոր դրութեան մէջ
հազիւ աշողվել է իրան ազատվել մի բարե-
կամի տուն մանկելով: Պօլեցիականները շուտով
այդ տունը հասել և պաշտպանել են: Նրա-
նից յետոյ բազմութիւնը գնացել է լոյր Բի-
կոնֆլիկի բնակարանի առջև և ծափահա-
րել է:

Նրեկոյն պ. Բրադլանդը նորից գնացել է
Հայդ-Արիկ և այնտեղ բազմութեան մէջ
սկսել է հրապարակախօսել: Ասել է թէ հա-
կառալ այն թշնամական ցոյցերին որոնց զո՛հ
եղած էին ինքը և իր բարեկամները, այն օր-
վայ ժողովրդական գումարումը հասած է իր
նպատակին, որովհետև խաղաղութեան հա-
մար իր արած առաջարկութիւնը հաճութեան
աղաղակներով ընդունվել է ներկայ գտնվող
ժողովրդից: Պ. Բրադլանդը ցած է յայտնել որ
ազատ Անգլիայում ուր նախագործվում են
ամեն ազատութիւններ, խաղաղութեան կու-
սակիցներին չէ թոյլատրվում հանդարտորէն
յայտնել իրանց կարծիքները:

Մի շաբաթ յետոյ, մարտի 10-ին (փետր-
վարի 26) էլ մի և նոյն տեղ ժողովրդական
ցոյցեր եղել են թէ պատերազմի կուսակից-
ներից և թէ հակառակորդներից: Այս անգամ
թիւրքաւորները իրանց հակառակորդներին,
խաղաղութեան բարեկամներին, թոյլատրել
են ցոյցեր անել թէպէտ սրանք էլ այս ան-
գամ պատրաստված և ամեն զգուշութիւններ
կատարած են եղել որ կարողանան պաշտ-
պանել իրանց իրաւունքները:

Պ. Պալատոն օրի արտաքին քաղաքականու-
թեան կարծիքները անդադար թշնամութիւն
են գրգռում իր դէմ Ռուսաստանի հակառա-
կորդների կողմից, մի նամակ է ուղարկել
Գրինվիչի «Նիւզ» շաբաթականի ազատական
ընկերութեան նախագահ պ. Ժ. Բոյլին:
Այդ նամակով նա յայտնում է թէ դիտա-
ւորութիւն չունի իրան կանխդատ ներկա-
յացնել առաջիկայ ընտրութիւնների ժամա-
նակ: Ասում է թէ մի քանի տարի կայ որ
օրից օր զգում է թէ ինքն էլ չէ կարող կա-
տարել այն բոլոր պարտաւորութիւնները որ
Գրինվիչի ընտրական խումբը իրաւունք
ունի պահանջել իր ընտրած անձերից: Շը-
նորհակալութիւն է յայտնում մինչև այժմ
իրան ցոյց տրված վտահոգութեան համար
և յորդորում է որ աշխատեն ամբողջապէս
ազատականներից երեսփոխան ուղարկել պար-
լամենտը: Պ. Պալատոն 1868 թվին Գրին-
վիչից ընտրվեցաւ և 1874-ին դարձեալ
ընտրվեցաւ, շատ սատակ վնասարանութիւն-
ներից յետոյ: Նի՞թ պ. Պալատոն հրաժարվել
անգամ քաղաքական կեանքից, իր հայրենիքի
արած մեծ ծառայութիւններին, իր անմասն
ճարտարախօսութեան և, որ աւելի հազուա-
գիւտ է, իր անհաջանկարութեան յիշատակը
միշտ անմահ կը մնայ ամեն ազատական ան-
գլխացու սրտի մէջ: Նի՞թ պ. Պալատոն իրան
այնչափ նուիրած չէր լինել իր ազատական
և մարդասիրական համբուժմանին, ի՞նչ նա
չէր աշխատի իր միւստրութեան ժամանակ
ազատական վերանորոգութիւններ մտցնել
Անգլիայում, զուցէ նա այնչափ հակառա-
կորդներ չէր ունեցել և աւելի մեծ պատու-
ներ էր ստացել բրիտանական արքունիքից,
բայց նա արհամարհեց այդպիսի սոոր հա-
շնները, որով Անգլիայի պատմութեան մէջ
նա կը թողնէ մի լուսաւոր հետք իր ետեւից:

«STAMBOUL» ԼՐԱԳԻՐԸ ԵՒ ԹԻՒՐԻՍԻՍԻ ՀԱՅԵՐԸ

Կ. Պօլսում Ֆրանսիական լեզուով հրատա-
րակվող «Stamboul» լրագիրը տպել է նորի-
ւում հետեւեալ յօդուածը հայերի վրա
«Les Arméniens» վերնագրով:

«Նորերում Ֆրանսիական «Journal des
Débats» լրագիրը տպել է հետեւեալ հաղոր-
դութիւնը: «Մեզ հաղորդում են Կ. Պօլսից
որ Սուլթանը խորհուրդ տուեց Կ. Պօլսի
հայոց ներքին պատրիարքին որ թիւրքիա-
հպատակ հայերը խնդրեն Հայաստանի հա-
մար ինքնավարութիւն, բայց պատրիարքը,
ինչպէս ասում են, պատասխանել է, որ ինքն
չը գիտէ մինչև անգամ հայերը կազմում են
արեւոք մի առանձին ազգութիւն»:

«Այդ սխալ մի իրողութիւն է, ասում է
«Stamboul» լրագիրը: Բնահայկառան ինքն
պատրիարքը անձնական կերպով խնդրել է
Բարձր. Դուռը շնորհել ինքնավարութիւնը
Հայաստանին: Տերութիւնը մինչև այժմ չէ
պատասխանել հայերի խնդրից, բայց կար-
ծում ենք որ նա այդ պահանջը բոլորովին
արդար է գտնում, աչքի առջև ունեւորդ որ
նոյն իրաւունքները տրվում են եւրօպական
Թիւրքիայի քրիստոնեայ նահանգներին: Ու-
րիշ կողմից պատրիարքը չէր կարող այդ
տեսակ խօսքեր արտասանել, որովհետև նա
ինքն ամենից շատ է յարգում հայերի ազ-
գային զգացմունքը, որ այդ ազգը խնացել է
պահպանել, չը նայելով իր կրած պատմա-
կան բոլոր տառապանքներին: Հայերը միշտ
հաւատարմի են մնացել այդ զգացմունքին,
արհամարհելով այն բոլոր հայածանքները
որոնց նոքա միշտ ենթարկվել են: Նոքա այ-
ժմ էլ պատերազմում են մի աւելի սաստիկ
հայածանքի դէմ, քան թէ առաջվայ կրած
հայածանքները՝ դա է արեւմտեան եւրօպայի
յամառ անտարբերութիւնը նրանց վերաբե-
րութեամբ»:

Նոյն հայոց պատրիարքը Կ. Պօլսի ան-
ցեալ տարվայ կոնֆերանսի ժամանակ որ
գումարվեցաւ թիւրքիական քրիստոնեաների
գլուխեան բարեբեւութեան մասին խորհրդակցելու
համար, յանձնարարութիւն ունեւոր դիպլոմա-
տների ուղարկութիւնը դարձնել իր հայրենա-
կիցների վնասի վրա: Այդ դիպլոմատներից
մի քանիս բաւականացան պատասխանելով որ
չը կայ մի հայոց խնդիր: Դեռ շատ ժամա-
նակ չէ Անգլիայի պարլամենտի ամենանշա-
նաւոր անդամներից և պաշտօնական կեանքի
մէջ մեծ նշանակութիւն ունեցողներից միւս,
պատասխանելով դուքս Գլադսթոնը հայերին
նպատող պարլամենտական ճառի վրա, ասեց
որ զգոյշ չէ յարուցանել մի հայոց խնդիր»:

«Մարդ մոռնում է գուշակութիւնների
մէջ, երբ մոռնում է ինչ է պատճառը որ
արեւմտեան եւրօպան կամեւում է որ հայերը
բացառութիւն կազմեն թիւրքիական քրի-
ստոնեաներին խոստացած իրաւունքների մէջ:
Այդ խոստմունքները թէ ուսացաւ Կայսրի
և թէ անգլիական միւստրների բերանում
արեւելեան բոլոր քրիստոնեաների գլուխները
բարեբեւութեան նպատակ ունեւոր: Արեւոք արեւ-
մտեան եւրօպայի դէպի քրիստոնեաները ու-
նեցած մարդասիրական զգացմունքը անկեղծ
է: Նի՞թ այդպէս է, ոչինչ չէ կարող արդա-
րացնել նորա անտարբերութիւնը դէպի հա-
յերը»:

«Հայերը աշխարհին ամենահին ժողովրդ-
ներից միւս են: Մի քանի հազար տարի շա-
րունակ նոքա վայելում էին իրանց երկրի
անկախութիւնը: Նոքա քրիստոնեայ են քրի-
ստոնեութեան յայտնվելու սկզբից, և կազմում
են Թիւրքիայի ամենանշանաւոր տարրերից միւս:
Նի՞թ հաւատանք մինչև անգամ այն վնաս-
կազրկական հաշին որ հայերին ամենից քիչ
նպատաւար է, նոքա թիւրք միւսիայն Ասիա-
յում համարում է աւելի քան երկու միլիոնի:
Ուրեմն նոքա աւելի բազմութիւն են, քան

թէ յոյները եւրօպական Թիւրքիայում»:
«Կրթութիւնը և ուսումը, բաց աւելնով
յոյներին, տարածված է հայերի մէջ աւել
քան մի օր և է այլ արեւելեան ազգի մէջ:
Նոքա երբեք կարգի և հանգստութեան խառ-
գարիներ չեն եղել ոչ Ասիայում, և ոչ էլ
եւրօպայում: Նոքա աւելի լաւ են համարում
սպասել որ թէ իրանց տէրերը և թէ
քրիստոնեայ և մարդասեր եւրօպան կամա-
ւորապէս վերջ դնեն նրանց տանջանքներին,
որ նոքա կրում են դարերով՝ առանց տրտն-
ջալու և որոնց մասին նոքա սկսել են ձայն
բարձրացնել իրանց տէրերին միայն տաս
տարի, իսկ եւրօպային երկու տարի սրանից
առաջ: Բայց թէև նոքա չեն եղել արեւելեան
խնդրի յարուցման և նրա սարսափելի հետե-
ւանքների պատճառը, այնու ամենայնիւ ար-
դար կը լինէր որ նոքա էլ մասնակցէին, որ-
պէս նշանաւոր տարր, այդ խնդրի լուծման
մէջ, որով միջոց կը տրվէր ասիական Թիւր-
քիայում Ռուսաստանի և Անգլիայի մէջ երկ-
պառակութիւնների կարելութեանը և նշա-
նաւոր դժուարութիւններին վերջ դնելու:
Դորան առաջն աւելնում համար բաւական
կը լինէր եթէ Անգլիայի պետական մարդիկ
կամենային նրանցով պարագել և քննութեան
տակ գցել նրանց պահանջները գործնական
կէտից, առաջնորդվելով այժմեան քաղաքական
հանգամանքներում հաշտութեան քաղաքա-
կանութեան ոգով»:

Հարկաւոր ենք համարում յիշեցնել մեր
ընթերցողներին, որ այդ տողերի գլուղը, Կ.
Պօլսի Ֆրանսիական «Stamboul» լրագրի խմբ.
բաղրը, ինքն անգլիացի է:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 30/18 մարտի: «Daily Tele-
graph» լրագրին հեռագրում են: Նրեկ Մեծ
իշխան Նիկոլայ Նիկոլաւիչ վերադարձաւ
Սան-Ստէֆանո: «Standart» լրագրին մարտի
27-ից հեռագրում են որ Նիկոլայ, ուսաց
հաւատարմաւորը, դիմեց Բ. Դորանը պաշ-
տօնական թղթով, պահանջելով որ անգլիա-
կան նաւատորմը հեռանայ Կ. Պօլսից: Սալ-
ֆեա-փաշան յանձնեց այդ թուղթը Լայպը-
զին, որ անգլիական տէրութիւնից ստացված
հրահանգներին համեմատ պատասխանեց որ
անգլիական նաւատորմը անշարժ կը մնայ
մինչև որ ուսանկը կը հեռանան Կ. Պօլսի
շրջականներից: Բ. Դուռը հասցրեց Նիկոլա-
վին այդ գրութիւնը առանց իրանից որ և է
նկատողութիւն աւելացնելու:

Կ. ՊՈԼԻՍ, 28/16 մարտի: «Перев. Вѣд.»
լրագրին հեռագրում են որ լէյտինանտ
Պուշչին, որ զերի էր ընկել թիւրքերի մօտ,
աղաղակցաւ և այսօր ուղեւորվեց դէպի Օդէսա:
Պլատուր Հրամանատարը շնորհեց նրան և
նորան ստորագրեալ զինուորներին սուրբ
Դէորդի պատանշանները:

ՎԻԵՆՆԱ, 30/18 մարտի: «Новое Время»
լրագրին հեռագրում են որ Ռուսաստանի և
Անգլիայի մէջ պատերազմը անփախելի է:

ՎԻԵՆՆԱ, 29/17 մարտի: Բարձր. Դուռն
մէջ երկպառակութիւն ծագեց թիւրքաց կա-
ռավարչական ուսանկեր և անգլիական կու-
սակցութիւնների մէջ: Ռուսաստանը կուսակ-
ցութիւնը յաղթող հանդիսացաւ և այդ
պատճառով Աճմեղ-Վէֆիկ փաշան, որ Լա-
յարդի կուսակից է իր պաշտօնից հրաժա-
րակաւոր տուեց:

ՎԻԵՆՆԱ, 19/30 մարտի: Գերմանիայի
ներգործութեան ասի կարծիքները Լոնդո-
նում փոփոխութեան են ենթարկվում և պա-
տերազմը այնքան անհրաժեշտ չէ երևում
Իգնատիւիկ խօսքերին նայելով: Աւստրիայի
պահանջները մեծ են, և վերաբերվում են
Սան-Ստէֆանոյ դաշնագրի բոլոր պայման-
ներին փոփոխվելուն, Աւստրիան պահանջում
է որ Բոլզարիայի, Սերբիայի և Չէրնոգորիայի
նոր սահմանները ենթարկվեն փոփոխութիւն-
ների և կարծում է որ Ռուսաստանը զեջում
ներ կանէ այդ բոլոր պահանջներին:

ՕԴԵՍԱ, մարտի 20-ին: Լէյտինանտ Պաշ-
չին հասաւ Օդէսա և ուղեւորվում է դէպի
Նիկոլայեւ:

